ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի 15.06.2026թ. նիստի

Սկիզբ՝ 10:30
Ավարտ՝ 12:00

Նիստի օրակարգը

1. ՀՀ Արդարադատության նախարարության ռազմավարական ծրագրերի վերաբերյալ քննարկում

Հարց ու պատասխան

Նիստը վարում էր ՀՀ արդատարդատության նախարար Սրբուհի Գալյանը

Նիստին մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ

1. Թերեզա Գալստյան - «Արդարության տուն» իրավապաշտպան ՀԿ
2. Հասմիկ Մարտիրոսյան - Հայաստանի գործատուների հանրապետական միություն
3. Արմեն Տեր-Տաճատյան - «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ
4. Աննա Կռոյան - «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»
5. Արփի Հարությունյան - «Ժողովրդավարության զարգացման» հիմնադրամ
6. Մարիաննա Ավագյան - «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ
7. Արաքս Մելքոնյան - «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ
8. Գուրգեն Գրիգորյան - «Կառուցապատողների հայկական ասոցիացիա» ՀԿ
9. Արմենակ Դավթյան - «Հանուն ազատության» իրավական ՀԿ
10. Քրիստինե Ղասումյան - «Հայաստանի հաշվապահների ասոցիացիա» ՀԿ
11. Մարիամ Անտոնյան - «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
12. Արտակ Կիրակոսյան - «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ
13. Աննա Հովհաննիսյան - «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ
14. Դավիթ Գյուրջյան - «Իրավունքի զարգացման և պաշտպանության» հիմնադրամ
15. Քրիստինե Գևորգյան - ֆիզիկական անձ
16. Առնոլդ Բլեյան - ֆիզիկական անձ

Նախարարության ներկայացուցիչներ

Մարիամ Մելքումյան – նախարարի մամուլի քարտուղար

Գևորգ Ղուկասյան - նախարարի օգնական

Զարուհի Սարգսյան – խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող, հասարակական խորհրի պատասխանատու

Գոհար Մովսիսյան – խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող, հասարակական խորհրդի համակարգող

Համաձայն օրակարգի, Ս.Գալյանը ներկայացրեց ՀՀ կառավարության կողմից 25.02.2021թ. N 252-Լ որոշմամբ նախատեսված Կառավարության ռազմավարական կառավարման աշխատակարգով սահմանված՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվելիք 5 ռազմավարական նպատակները և դրանց ենթանպատակները: Նախարարը խորհրդի անդամներին ծանոթացրեց հիմնական ուղղություններին, դրանք են՝

1. Դատական համակարգի և վեճերի լուծման դատական և արտադատական եղանակների բարեփոխումներ,
2. Մարդու իրավունքների պաշտպանություն,
3. Հակակոռուպցիոն քաղաքականություն,
4. Քրեակատարողական և պրոբացիայի համակարգերի արդյունավետության բարձրացում,
5. Ինստիտուցիոնալ իրավական բարեփոխումներին վերաբերող հարցեր (ներառյալ՝ իրավապահ մարմինների ոլորտի բարեփոխումները):

Ռազմավարական բարեփոխումների համատեքստում առանձնացվեցին նաև ենթանպատակները, մասնավորապես՝ պարտադիր հաշտարարություն, վարչական դատարանների բեռնաթափում, արդյունավետ դատաքննություն, դատավորների բարեվարքություն, ազդարարման համակարգ, դատարանների շենքային պայմանների ստանդարտացում, խտրականության և խոշտանգումների դեմ պայքար, վեճերի արտադատական լուծման մեխանիզմների զարգացում, աշխատանքային վեճերի հաշտարարության մեխանիզմ և այլն:

Նախարարը, կարևորելով ռազմավարական բարեփոխումների աշխատանքներում խորհրդի անդամների հետ համագործակցությունը, առաջարկեց ներկաներին ակտիվ հանդես գալ իրենց առաջարկներով, ներկայացնել կարծիքներ հանրության լայն շրջանակներին հուզող՝ արդարադատության ոլորտին առնչվող խնդիրների և դրանց լուծման վերաբերյալ:

Ներկայացված թեմաների շուրջ ծավալվեց քննարկում, խորհրդի անդամների կողմից հնչեցին առաջարկներ, ինչպես նաև՝ տրվեցին ռազմավարական առաջարկների ներկայացման ժամկետների, արտադատական մարմինների, կալանավորումների թվի աճի կարգավորման, ծառայությունների պատվիրակման, դատավորների թվի ավելացման, ՔԿ

հիմնարկներում աշխատակիցների վերապատրաստումների անցկացման (այդ թվում՝ ՄԻԱՎ-ով ապրող պատիժ կրող անձանց հանդեպ խտրական վերաբերմունքի հակազդման), անցումային արդարադատության, ապօրինի ծագում ունեցող գույքի ու հաշիվների տնօրինման վերաբերյալ և լորտին առնչվող այլ հարցեր:

Խորհրդի անդամներից մի քանիսը շնորհակալություն հայտնեցին նախարարին՝ նախորդ հանդիպման ընթացքում բարձրացված մի քանի հարցերի կարգավորման համար:

Նիստի ավարտին նախարարը շնորհակալություն հայտնեց ակտիվ մասնակցության, քննարկումների և սրտացավ վերաբերմունքի համար՝ ակնկալելով սերտ համագործակցություն և ներգարվվածություն նախարարության կողմից իրականացվող ծրագրերի իրականացմանը:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝ **ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆ**